ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին»

(Պ-328[1]-01.07.2022-ԳԿ-011/0) ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ նախադասությամբ. «Ազգային ժողովի կանոնակարգ 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի 165-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.՝ «Ազգային ժողովի հատուկ նիստերի և խորհրդարանական լսումների առցանց հեռարձակումը Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքով ուղեկցվում է հայերեն ժեստերի լեզվի թարգմանությամբ:»:		Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 165-րդ հոդվածի 2-րդ մասը *լրացնել հետևյալ նախադասությամբ.՝ «Ազգային ժողովի նիստերի և խորհրդարանական լսումների առցանց հեռարձակումը Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքով* ***կարող են*** *ուղեկցվել հայերեն ժեստերի լեզվի թարգմանությամբ:»* : Այս առումով, անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչ ընթացակարգով, որ դեպքերում և ինչ պայմաններով կարող է Ազգային	Առաջարկն ընդունվել է մասամբ:	Ընդունվել է

			ժողովի նիստերի և խորհրդարանական լսումների առցանց հեռարձակումն ուղեկցվել հայերեն ժեստերի լեզվի թարգմանությամբ: Առանց ընթացակարգերի և դեպքերի խորհրդարանական լսումների համար առցանց հեռարձակումը ժեստերի լեզվի թարգմանությամբ նախատեսելը հայեցողական բնույթ է կրում, ինչը խնդրահարույց է:		
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «լրացնել հետևյալ նախադասությամբ» բառերը փոխարինել «լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ» բառերով.	Առաջարկն ընդունվել է, կատարվել է փոփոխություն:	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 2-րդ հոդված**	Նախագիծը լրացնել նոր՝ 2-րդ հոդվածով, ուժի մեջ մտնելու վերաբերյալ համապատասխան դրույթով.	Առաջարկն ընդունվել է, կատարվել է համապաստասխան փոփոխություն:	Ընդունվել է
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Անհրաժեշտ է Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ *սահմանադրական օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են սահմանադրական օրենքի վերնագիրը, սահմանադրական օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «սահմանադրական օրենք» բառը:*	Առաջարկն ընդունվել է, հոդվածը խմբագրվել է:	Ընդունվել է